ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

13 ապրիլի 2023 թվական թիվ 58-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 21-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 63-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, 64-րդ հոդվածի 2-րդ և 172-րդ հոդվածի 4-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» 126-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի նախկին Մարմաշեն համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 13-ի թիվ 46-Ն որոշմամբ հաստատված «Մարմաշեն համայնքի տեխնիկաների սպասարկման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 42-րդ կետի դրույթը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մարմաշեն համայնքի տեխնիկաների սպասարկման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համար՝ 55.215.1175198) վերակազմակերպել՝ այն միացնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համար՝ 55.215.1002947):

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման ենթարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մարմաշեն համայնքի տեխնիկաների սպասարկման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության դադարումը:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մարմաշեն համայնքի տեխնիկաների սպասարկման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով համարել վերակազմակերպված, միացած՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մարմաշեն համայնքի տեխնիկաների սպասարկման կենտրոն» համայնքային ոչ

առևտրային կազմակերպության գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից:

4. Սահմանել, որ միացած՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մարմաշեն համայնքի տեխնիկաների սպասարկման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավունքներն ու պարտականությունները, նրան պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, հիմնական և շրջանառու միջոցները, դրամական մնացորդներն անցնում են վերջինիս իրավահաջորդ կազմակերպությանը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ փոխանցման ակտին համապատասխան:

5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ համայնքի ավագանու առաջիկա նստին ներկայացնել առաջարկություն՝ միավորված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մարմաշեն համայնքի տեխնիկաների սպասարկման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների թվաքանակի և հաստիքների կրճատման վերաբերյալ:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -17	Դեմ -8	Ձեռնպահ -2
Ա. ԱՅՎԱԶՅԱՆ	Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ	Ա. ԻԳԻԹՅԱՆ
Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ	Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ	Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ	Կ. ԱՐՇԱԿՅԱՆ	
Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ	
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ	Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ	
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Ա. ԴՐՄԵՅԱՆ	
Լ. ՂԱԶԱՐՅԱՆ	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ	
Մ. ՄԱԹՈՍՅԱՆ	Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ	
Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ		
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ		
Մ. ՄՆԱՑՅԱՆ		
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ		
Ա. ՄՔՈՅԱՆ		
Հ. ՆԱՎՈՅԱՆ		
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ		
Հ. ՈՍԿԱՆՅԱՆ		
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

13 ապրիլի 2023 թվական
գյուղ Ախուրյան